

ԱԳԱՊԻ ՆԱՍԻՊՅԱՆ. Բրիտանիա և Հայկական Հարցը 1915—1923. հրատարակություն Հ. Բ. Ը. Միության Վահրամ Ապտալյան Մշակութային հիմնադրամի, Պեյրուի, 1994, 344 էջ:

Ա. Նասիպյանի սույն աշխատությունը, որ առաջին անգամ լույս է տեսել անգլերեն, 1984 թ. լոնդոնում, նվիրված է հայ ժողովրդի նոր պատմության կարևոր էջերից մեկին: Եվ դժոխականությամբ պետք է նշել, որ հեղինակը իր խնդիրը լուծել է բարեխղճությամբ ու դիտական բարձր մակարդակով: Ի՞նչ կարևոր հարցեր են քննարկվում այս դրքում:

Օգտագործելով բավական հարուստ նյութեր, մեր հայուհի պատմաբանը նորից հիմնավորում է պատմական այն ճշմարտությունը, որ Մեծ Բրիտանիան Առաջին Համաշխարհային պատերազմի նախօրեին և մասնավորապես XIX դարում վճռականորեն հանդես դալով Մերձավոր ու Միջին Արևելքում Ռուսաստանի արտաքին քաղաքականության դեմ ամեն կերպ պաշտպանել է Օսմանյան կայսրության ամբողջականությունը և խափանել սուլթանական Ռուսաստանի լծի տակ հեծող ոչ բուրժուական իմպերիալիզմի, այլ ընդհանուր առմամբ և արևմտահայության ազատագրության գործը: Խոսելով Սան Ստեֆանոյի և Բեռլինի պայմանագրերի մասին Նասիպյանը նշում է դրանց էական տարբերությունը Արևմտյան Հայաստանի հայ բնակչության հետագա ճակատագրի համար: Հայտնի է, որ հիմնականում անգլիական կառավարության ցանկությամբ իրականացված Սան Ստեֆանոյի դաշնագիրը, որով և հնարավորություն տրվեց սուլթան Աբդուլ Համիդին ուժեղանալ իր ղեկավարությամբ Արևմտյան Հայաստանում և ավելին՝ աշխատել Հայկական Հարցը «լուծել» մասնավորապես կոտորածների՝ ցեղասպանության միջոցով: Անգլիայի թուրքոֆիլական քաղաքականությունը շատ աղետներ պատճառեց հայերին: Գրքի հեղինակը իրավամբ համաձայնում է Անգլիայի նշանավոր պետական գործիչ Գ. Լիոյդ Ջորջի գրած հետևյալ տողերի հետ. «Եթե մեր շարաշրջը միջամտությունը կատարված չլիար, հայերու մեծամասնությունը, 1878-ի Սան Ստեֆանոյի դաշնագրով, գրված պիտի ըլլար ռուսական դրոշմի պաշտպանության տակ... Բրիտանական կառավարության արարքն էր, որ անխուսափելիորեն առաջնորդեց 1895—1897-ի, 1909-ի սարսափելի ջարդերուն և հոռեգությունը՝ 1915-ի ողջակիզումին»:

Առաջին Համաշխարհային պատերազմի տարիներին Մեծ Բրիտանիայի քաղաքականության մեջ, իհարկե, չէր կարող տեղի չունենալ որոշակի փոփոխություն, քանի որ Բրիտանիայի գլխավորած Թուրքիան հանդես եկավ որպես Անգլիայի թշնամի, իսկ հայ ժողովուրդը որպես Անտանտի պետությունների դաշնակից: Բացի դրանից Անգլիային հարկավոր էր օգտագործել նաև հարցի բարդական գործոնը՝ հանդես դալ հալածված ժողովրդի պաշտպանի դերում: «Իր թշնամիները պարտության մատնելու համար,— գրում է Ա. Նասիպյանը,— հարկ էր, որ Բրիտանիան զորակույի ենթարկեր ոչ միայն իր տրամադրության տակ գտնվող նյութական բուրժուազիաները, այլ նաև իր բարոյական ուժերը... Բրիտանական կառավարությունը պետք էր, որ խթաներ պատերազմական ճիգը, ցույց տալով թե երկրին մեջ պահանջված զոհողությունները արդարացի էին և կարևոր: Կառավարությունը պետք էր որ ապահովեր նաև օսմանյան բանակներուն դեմ կոմիտե կայսրության մահադատական հպատակներուն հավատարմությունը և հանդարտացներ անոնց խիղճը, ցույց տալով թե պատերազմը մահադատականության դեմ չէր, այլ՝ թուրք կառավարության վայրագության ու կեղեքումին: Ատկե զատ, հարկ էր, որ ջանար ան ազդել չեղոր երկրներին ու մանց վրա, մասնավորապես՝ Պալեստինային մեջ, անոնց՝ որոնք սպասողական դիրք մը ունեին»:

Միանգամայն արդարացի է Նասիպյանը, երբ խոսելով Մեծ Եղեռնի մասին գրում է, որ «հիմնովին կեղծիք է թրքական այն պնդումը, թե 1915 թ. հայկական ողջակիզումները և տարագրությունները իբրեւ տեղի են ունեցել արևմտահայերի «դավաճանության» պատճառով: Գաղտնիք չէ, որ թուրք ոճրագործները իրենց հայաջինջ ծրագրերը կազմել են պատերազմից դեռևս տարիներ առաջ: 1910—1911 թթ., օրինակ, Սալոնիկում կայացած գաղտնի ժողովներում Բրիտանիայի դիվանագիտության ներկայացուցիչները, որոնք նախատեսում էին բռնություններ իսլամացնել Օսմանյան կայսրության ոչ թուրք ժողովուրդներին: Ի դեպ, շատ ցանկալի կլիներ, եթե գրքի հեղինակը հրապարակ

կեր Անգլիայի արխիվներում այս մասին պահվող նյութերը:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, Մեծ Բրիտանիան, ինչպես որ սափափում էր, նորից վարեց թուրքոֆիլական քաղաքականություն: Անգլիան նորից սկսեց սիրաշահել Թուրքիային, աշխատելով նրան ոտքի հանել հատկապես հարձրգային Ռուսաստանի դեմ: Մոռացվեցին հայասիրական զեղումները, Անգլիոյվկասը ոտք դրած անգլիական զորավարները, պաշտպանելով մուսաֆաթներին, վարեցին հակահայկական քաղաքականություն: «Ուրման», — եղբակացնում է Նասիպյանը, — կարեկցությունը և ազգային շահագրգռությունը նկատումը անհրաժեշտ դարձուցեր էին Հայաստանի ազատագրումին մասին բրիտանական համակարգից հայտարարությունները պատերազմի ատեն միայն»։ Խիստ բնորոշ է, որ 1918—1920 թթ. ամբողջ ժամանակամիջոցում Անգլիան, ինչպես նաև արևմտյան մյուս պետությունները փաստորեն ոչ մի գործնական քայլ չարեցին ծանր վիճակում գտնվող Հայաստանի Առաջին Հանրապետությանը օգնելու համար:

Ինչպիսի երազանքներ, ինչպիսի հուսախաբություն: Սևրի հանրահայտ պայմանագիրը, որով այնքան ոգևորվեցին մեր ազգային շատ գործիչներ, փաստորեն խաբեություն էր: «Հայաստան հանդիսականներու համար բեմադրված Սևրի դաշնագիրը... արհեստական վավերաթուղթ մը եղավ, և ավելի ևս ծանրացուց կացությունը: Ան հաստատեց Հայաստանի դիրքը՝ իբրև դաշնակից պետություններուն և մասնավորապես Բրիտանիո մեկ արբանյակը, բայց ոչ մեկ պաշտպանություն հայթայթեց անոր»։

Գրքի վերջաբանում Նասիպյանը հարկ է համարում նորից ընդգծել հետևյալ հանգամանքը. «Բրիտանիո շահագրգռությունը հայ ժողովրդին նկատմամբ՝ չզուգակցուցան հայերու երկրամասին հանդեպ համապատասխան շահագրգռությամբ մը: Պատերազմեն առաջ, Բրիտանիան շահագրգռվել էր Հայկական երկրամասով և վճռական էր թե՛ որն է գինով պետք չէր որ ինչքան ան ուսական ազդեցության տակ: Պատերազմի ընթացքին, ան շահագրգռվեցավ հայ ժողովրդով, բայց ոչ անոր երկրամասով, որուն համար ինք հոժար չէր որն է նյութական կամ մարդկային զոհողություն հանձն առնել»։

Խիստ բնորոշ է, որ անգլիական կառավարությունը մերժեց Հայաստանի խնդրանքը մեկ միլիոն ստեռլինգ վարկ իրեն տրամադրելու մասին: Լոնդոնի պաշտոնական շրջանները, հակառակ իրենց նախկին խոստումներին, պատկերավոր հետո փորձեցին հայերին հասկացնել,

թե «նորին Վեհափառության կառավարությունը բարեսիրական կաղմակերպություն մը չէ, և թե՛ փոխանակ արտաքին գոթի և օգնության մը՝ տրեղենական կոչերուն, մենք պիտի ուզեինք Հայաստանի մեջ տեսնել քիչ մը ինքնավստահության և քաղաքական կարողության ապացույց, թե՛ Հայաստանի շարունակելի գոյությունը իբրև ինքնավար պետություն մը՝ կախում ունի հայկական ճիղերեն ու կարողությունն և չի կրնար արտաքին բանականություն և արտաքին դրամի վրա հիմնվել...»։

Նասիպյանը նկատում է նաև, որ մյուս մեծ տերությունները ևս, որոնք զրդում էին Հայաստանին «կոշտ» դիրք բռնել հորհրդային Ռուսաստանի նկատմամբ, նույնպես ոչ մի օգնություն չցուցաբերեցին իրենց «դաշնակցին»։ Հիշենք, որ երբ քննարկվեց Թուրքիան արշավեց դեպի Արևելյան Հայաստան, 1920 թ. աշնանը, հայության զինված կախվեց նոր ցեղասպանության վտանգը, որը, ինչպես հայտնի է, վերացավ միայն Ռուսաստանի 11-րդ բանակի վճռական միջամտության շնորհիվ:

Հայության նկատմամբ Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականությունը ավելի ակնհայտ դարձավ հատկապես Լոդանի 1922—1923 թթ. միջազգային կոնֆերանսի ժամանակ, երբ Անգլիան, Ֆրանսիան և արևմտյան մյուս տերությունները, փաստորեն կատարելով Թուրքիայի կամքը, բուլղոլի մոռացության տվեցին հայերին և Հայկական Հարցը: Պատահական չէ, որ մեծ պետությունների այս վարքագիծը անգլիացի նշանավոր պատմաբան Առնոլդ Թոյնբին որակեց որպես խարդախ և անմարդկային:

Պատմաբանը, սակայն, ընդգծելով անգլիական պաշտոնական շրջանների երկդիմի, խարդախ քաղաքականությունը Հայկական Հարցում, միաժամանակ անհրաժեշտ է համարում խոսել այն բազմաթիվ անգլիացի նշանավոր գործիչների մասին, որոնք իրենց ձայնը բարձրացրին ի պաշտպանություն հայ ժողովրդի: Գրքում հիշվում են Գլադստոնը, Արկայի գուբը, Ջեյմս Բրայսը, էմիլի Ռոբինսոնը, Հ. Լինչը, է. Բիրսը, Նոբլ ու Հարոլդ Պաքսդեն և գլխավոր նշանավոր պատմաբան և ուրիշներ: Նասիպյանը հատկապես ջերմ խոսքեր է ասում Ջ. Բրայսի մասին, քանի որ նա հետևողականորեն և ազնվորեն բազմաթիվ գրավոր ու բանավոր ելույթներ է ունեցել սուլթանական բռնապետության կողմից ճնշվող ու հայածվող արևմտահայության օգտին: 1896 թ. իր հայտնի «Տրանսկավկասիա էնդ Արարատ» գրքի շրջանում հրատարակության մեջ Բրայսը վճռականորեն դատապարտեց մեծ տերություններին այն բանի համար, որ նրանք անտարբերու-

թյուն ևն ցուցաբերում հայկական կոտորածների նկատմամբ, Հետադա տարիներին ևս նա բազմիցս հանդես եկավ թուրք ջարդարարների դեմ: Ջնյմս Բրայսը, իսկապես, մեր ժողովրդի լավագույն բարեկամներից մեկն էր:

Ազապի նասիայանի դրբում բերվում են հետաքրքիր տեղեկություններ Անգլիայում կազմակերպված այն բարեգործական ու հասարակական ընկերությունների մասին, որոնք աշխատել են օգնություն ցույց տալ արևմտահայերին: Դրանցից ամենագործունյան «Բրիտանիա—Հայաստան» կոմիտեն էր, որ հիմնվեց 1912 թ. (ատենապետը՝ հաշտարար դատավոր Է. Ուլլամս):

Անգլիացի մի շարք հեղինակներ հատուկ ուշադրություն է հետևեցին քաղաքական այն դեպքերին, որոնք տեղի ունեցան 1920 թ. վերջերին և 1921 թ. սկզբներին: Նրանք իրավամբ նշեցին այն փաստը, որ բնավական նացիոնալիստները, հատկապես ռասիստ դորաճրամանատար կարարների փաշան, նպատակ ունեին իրադրոծել հայերի նոր ցեղասպանություն Արևելյան Հայաստանում և այդ ցանկությունը կկատարվեր, եթե լիներ հորհրդային Ռուսաստանի միջամտությունը: Այսպես, անգլիացի հայտնի պատմաբան Հարոլդ Քեմփբելին հայտնեց այն կարծիքը, թե ռուսները արժանի են «իրական հարգանքի» Հայաստանին օգնած ըլլալուն համար: Անգլիական և կեղևեցու ներկայացուցիչներից մեկը գրել է. «Մարդոց այն խումբը, որ Հայաստանը Ռուսիո բազմակենտրոն մեջ նետեց 1920—21-ի ձմռանը, անտարակույս իրական ծառայություն մը մատուցանեց իր երկրին, ծանր գին վճարելով անշուշտ շատ մը փայփայված ավանդություններու ըզձանքներու զոհողությամբ, ու հակառակ եվրոպայի հանրային կարծիքին: Եվ սակայն իրավ է, թե անոնք շիջումն փրկեցին իրենց երկիրը, այն միակ միջոցով, որ կարելի էր»: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ նման կարծիքներ հայտնեցին նաև մի շարք այլ հեղինակներ:

Ուսումնասիրության արժանիքներից մեկը պետք է համարել նաև այն, որ նրանում բերված փաստերն ու վկայություններն անվիճելիորեն նորից ցույց են տալիս թե ինչպիսի բռնապետություն է եղել օսմանյան պետությունը՝ իր բարբարոսությունով չգերազանցված ամբողջ աշխարհում: Անուր հալածանքները, կոտորածները ստիպում էին հատկապես արևմտահայ գյուղացիությանը թողնել իր հայրենիքը և գաղթել Ռուսաստան ու այլ երկրներ: Անգլիական աղբյուրներում, օրինակ, իր ժամանակ արձանագրվեց այն, որ 1858 թ.

«Տրապիզոնի մեջ թուրք իշխանություններու «Բրիտ և Նեղացուցիչ» վերաբերումը քրիստոնյաներուն հանդեպ, զանոնք ստիպած էր դիմելու սահմանն անդին, ռուսական պաշտպանության, Հյուսիսայտոս ձ. Թեյլորի համաձայն, այնքան խիստ էր քրիստոնյա հայերուն հանդեպ կեղևեցումը Տիարբեքի մեջ, որ մեծ թիվ մը անոնցմե հավանարար միանար լատին եկեղեցիին՝ ձեռք բերելու համար ֆրանսական Հյուսիսայտոսարանին պաշտպանությունը: Ասկե վատ, մոտ 1400 ընտանիքներ կպատրաստվեին Ռուսահայաստան գաղթելու: 1869-ին Հյուսիսայտոս Թեյլորը հաստատեց թե, վերջին երեք տարիներուն, տասանորդի հավաքումին կեղեքիչ դրության պատճառով, էրդրումի վիլայեթին մեջ «նախապես գոյություն ունեցող 106 գյուղերն հիմա միայն 76-ը կան... Մուշի շրջանն 750 ընտանիքներ գաղթել էին Ռուսիա... Այս գավառներուն մեջ, ամեն տեղ,—կը շարունակեր Թեյլորը,—հայերը դանդաղեցնել կը գանգատին թրքական կառավարության դեմ»:

Աշխատության մեջ անգլիական աղբյուրներից բերված են բազմաթիվ օրինակներ նաև այն մասին, թե հայ բնակչության նկատմամբ ինչպիսի վայրագություններ էին գործադրում թուրքական իշխանությունները հետագայում՝ լՂԱ դարի վերջերին և XX դարի սկզբներին:

* * *

Ազապի նասիայանի այս աշխատության համար նախարանը գրել է հայ հասարակական ու մշակութային անվանի գործիչ, գրքի հեղինակի նախկին ուսուցիչ, վաստակաշատ Վահե Վահյանը: Իր համառոտ, բայց բովանդակալից ներածականում նա քննարկում է աշխատության մեջ շոշափվող մի շարք կարևոր հարցեր և հանդում ճիշտ կարակացություններ: Այսպես, օրինակ, նա նույնպես հստակորեն ընդգծում է, որ եթե Սան Ստեֆանոյում 1878 թ. կնքված պայմանագրի 16-րդ հոդվածը Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի վերահսկողությամբ բարեփոխումներ իրականացնելու ունի պայմաններ էր ստեղծում, ապա նույն թվականին Անգլիայի ու արևմտյան մյուս պետությունների պահանջով Բեռլինում ընդունված պայմանագրի 61-րդ հոդվածն ընդհակառակը, հնարավորություն տվեց Բ. Դուսնը չկատարել ոչ մի ուժեղում և կազմակերպել զանգվածային ջարդեր: Թուրքական ջարդարարների առջև «կրթվելու աղաժատ ասպարեզ» հայերուն հետ վարվել ճիշտ այն ձևով, որ կհարմարեր՝ մանրամասն ամբողջականությամբ պատրաստած իրենց հայաչին ծրագրին գործադրման:

Նախաբանում բերված է մի շատ հետաքրքիր օրինակ այն մասին, թե ինչպես Մեծ Բրիտանիայի վարչապետ Վիլյամ Պիտ կրտսերը 1783 թ. կոչ էր անում սուլթանին՝ ոչնչացնել արևելահայերին, եթե նրանք օգնեն ռուսական զորքերին մտնել Անդրկովկաս:

Այստեղ նշված է նաև այն շատ բնորոշ փաստը, թե ինչպես պատերազմի ժամանակ հաղթած պետություններ Անգլիան, Ֆրանսիան, ԱՄՆ-ը և մյուսները ոչ միայն չպատժեցին հանցագործ Թուրքիային, այլ ամեն կերպ սիրաշահեցին նրան: «Համաշխարհային Առաջին ընդհանուր պատերազմի վախճանին, շարաշար պարտված Թուրքիոյ հետ դաշինք կնքելու՝ ձեռնարկներուն առիթով, հաղթական կողմի ուժերը իրարու հետ կմեցին Թուրքիան սիրաշահելու քանքին մեջ և ո՛չ քեզայն պատմելու և անոր անշարժի վարագործություններն վերապրած հայ մնացորդներուն հատուցում ընելու աշխատանքին: Ամեն մեկը այդ հաղթական կողմին անդամներուն կծգտի յուրացնել քուրճին ձեռքը մնացած հողերէն պատուո հող ավելի, կամ առանձնաշնորհումներու՝ անոր իշխանութեան տակ գտնվող տարածություններուն վրա» (ընդգրծումն իմն է—Մ. Ն.):

Նախաբանի հեղինակը բարձր գնահատական է տալիս Նասիպյանի աշխատությանը: Գրքի հեղինակը «մանրակրկիտ որոնումով և բծախնդիր ընտրությամբ օգտագործած է այն իր քննարկած նյութին հետ առնչություն ունեցող փաստաթուղթերու ճոխ այն մթերքը, զոր հաջողված է ձեռք բերել Բրիտանական պետության այլազան մարմիններուն փաստագրական ծրարներէն...»: Ամփոփելով իր խոսքը Նասիպյանի ուսումնասիրության մասին, Վահե-Վահյանը գրում է. «Իր խորաթափանց ու ողջախոհ դատումով, զոկտ. Ագապի Նասիպյանը հասած է այն համոզումին, թե Ռուսիան ցարական իշխանության շրջանին և այնուհետև՝ խորհրդային իրավակարգի օրերուն, պաշտպան է կանգնած հայության, մեկն ավելի առիթով, ու փրկած է զայն վերջնական փշացումէ: Կրնա ան առաջնորդված չլլալ մարդասիրական ըզդացումէ, կամ՝ հայոց կողմն իրեն հանդեպ ցուց տրված հավատարմությունը գնահատելու տրամադրութենէն: Կրնան իր սեփական շահերէն թելադրված ըլլալ փրկարար այդ քայլերը: Իբրև ողորմություն ընծայված բարիքը

պիտի չըլլար տեական: Մեր բախտավորությունը փնտրենք մենք այն իրողութենէն, թե շահերու նմանություն կա՞ Ռուսիո նման հզոր ուժի մը և այլապես վտանգված մեր ժողովուրդին միջև: Մենք լիովին բաժանում ենք նախաբանի հեղինակի այս կարծիքը:

Նասիպյանի աշխատությանը արժանի գնահատական են տվել նաև մի շարք հայ ու օտարազգի հեղինակներ: Ականավոր ֆրանսահայ պատմաբան, պրոֆ. Արթուր Պելլերյանը, օրինակ, գրել է. «Մեր ժողովուրդի ժամանակակից պատմության վերաբերյալ ուսումնասիրություններուն... գրեթե բոլորին տեղյակ ըլլալով, արդարացիորեն կրնանք ըսել թե Նասիպյանի ուսումնասիրությունը լավագույններն է... Նասիպյան հաջողած է ոչ թե միայն պատմաբանի անալոգ մոտեցումով և տրամաբանությունով մեկնաբանել, այլ նաև իսկական պերսպեկտիվ մը հատուկ ճաշակով՝ վավերաթուղթերը ընտրել և զանոնք արժեկորել»:

Գրախոսները ճիշտ են նկատել, որ Նասիպյանը օգտագործել է ինչպես արխիվային, այնպես էլ արդեն հայտնի շատ հարուստ նյութեր: Գրքում բերված են ոչ քիչ փաստաթղթեր, որոնք հրապարակվում են առաջին անգամ: Ուսումնասիրության մեջ քննարկվում են հիմնական խնդրին առնչվող բազմաթիվ հարցեր: Նրանում հնարավոր է, որ լինեն ձևակերպումներ, մեկնաբանություններ, որոնց հետ ընթերցողը համաձայն չլինի, բայց բոլոր դեպքերում էլ գրքի հեղինակը ցուցաբերել է գիտնականին հատուկ բարեխղճություն: Իհարկէ, ցանկալի կլինէր, եթե Նասիպյանը օգտագործեր այն նյութերը, որոնք պահվում են Հայաստանի ու Ռուսաստանի պետական արխիվներում: Գրանից կշահեր աշխատությունը, նկատենք, որ գրքի հայերեն թարգմանությունը զերծ չէ թերություններից:

Ագապի Նասիպյանի գիրքը արժեքավոր նվեր է ընթերցող հասարակայնությանը: Հեղինակը իսկապես գիտական շրջանառության մեջ է դնում բազմաթիվ կարևոր փաստաթղթեր ու նյութեր: Մեր շնորհալի պատմաբանի այս ուսումնասիրությունը, անկասկած, զգալի ներդրում է խնդրին վերաբերող պատմագրության մեջ:

Պրոֆ. Մ. Ն.